



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 03 ԴԵԿՏԵՄԵՐ, 2018

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 36

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

Տէր, քու սերդ երկինքին պէս անսահման է,  
հաւաքարմութիւնդ՝ մինչեւ ամպերը կը հասնի:  
Արդարութիւնդ լեռներուն պէս բաձր է,  
դաբաստաններդ՝ ովկիանոսներուն պէս խորունկ:  
Դուն է որ կը հոգաս  
մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէր:  
Ինչ թանկագին է հոգածութիւնդ, ով Աստուած.  
բոլոր մարդիկ քու թելերուդ հովանիին կ'ապաւինին:  
Քու փաճարիդ առաքլ օրհնութիւններով կը լիացնես զանոնք,  
շնորհքներու քու գեպէդ խմել կու տաս դուն անոնց:  
Որովհետեւ դուն ես կեանքի աղբիւրը.  
լոյսովդ է որ մենք լոյսը կը տեսնենք:  
Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝  
որոնք քեզ կը ճանչնան,  
եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ա ՆԱՄԱԿ  
ԳԼՈՒԽ 5:14-21

## ԱՍՏՈՒՄԾ ՄԵՐ ԽՆԴՐԱՆՔԸ ԿԸ ԼՍԷ (5:14-17)

Նամակը իր աւարտին պիտի հասնի, եւ Յովհաննէս Առաքեալ կ'ուզէ, որ հաւաքացեալները որոշ յարակոթիւն մը եւ առաւել եւս վարահոյժիւն ունենան ինչ բանի որ կը հաւաքան: Նախորդող հաբուածներուն մէջ յոյսն ու վարահոյժիւնը քալէ յետոյ, որ այս բոլոր բաները գրեց նպատակ ունենալով, որպէսզի հաւաքացեալները, որոնք կը հաւաքան Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսին, ուրեմն յաւիտենական կեանք ունին, այդ կեանքը ժառանգելու կոչուած են: Յաւիտենական կեանքը պարգեւ մըն է քրուած Աստուծոյ կողմէ եւ իր լրումը կը գտնէ Յիսուս Քրիստոսի մէջ: Ուստի Յովհաննէս Առաքեալ կ'ուզէ որ հաւաքացեալները այս յաւիտենական կեանքին նկատմամբ յարակոթիւնը ունենան: Այդ իմաստով ալ Յովհաննէս Առաքեալ, ինչպէս իր Աւերարանին մէջ, այնպէս ալ Ընդհանրական այս նամակին մէջ այս բոլորի մասին կը գրէ, որպէսզի անհաւաքները լսելով՝ հաւաքան, հաւաքալով, ըստ այն ապրին, եւ ապրելով՝ գիտնան ճշմարտութիւնը:

Շարունակելով միտքը, Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ. «**Ուստի համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ, այն վարահոյժեամբ՝ որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ**» (14 հմբ): Այս արտայայտութեան մէկ այլ փարբերակը Յակոբոս Առաքեալ իր նամակին մէջ կը գրէ ըսելով. «**Ձեր ուզածը չէք ունենար, որովհետեւ Աստուծմէ չէք խնդրեր. կամ կը խնդրէք եւ Աստուած չի փար, որովհետեւ գէշ նպատակով կը խնդրէք, ձեր հաճոյքներուն ծառայեցնելու համար**» (Յակոբոս 4:2-3): Իսկ Քրիստոս պիտի ըսէ. «**Խնդրեցէք՝ պիտի քրուի, փնտրեցէք՝ պիտի գտնէք, դուռը զարկէք՝ պիտի բացուի**» (Մտք 7:7): Ահա թէ ինչո՞ գրեց Յովհաննէս Առաքեալ այս նամակը, որպէսզի հաւաքացեալները գիտակցին՝ թէ յաւիտենական կեանք ունին, եւ ըստ այնմ Աստուծոյ դիմեն, Աստուծոյ հետ խօսին, որովհետեւ Աստուած Իր Հոգին քրուաւ, եւ այդ Հոգիով է որ գԱստուած «Աբբա», այսինքն՝ Հայր կը կոչենք (Հռոմ 8:15), եւ Աստուած պիտի լսէ, մանաւանդ՝ երբ այդ խնդրանքը կ'ըլլայ Աստուծոյ կամքին համաձայն: Որովհետեւ յաճախ աշխարհի դրուածքը, մեր ամենօրեայ կեանքը ընթացքին, կրնան պահ մը շփոթեցնել մեզ, եւ փակաւին չըսելու համար մեր մտքերուն մէջ կասկածներ արթնցնել, թէ արդեօք Աստուած կը լսէ մեզ, երբ նեղութեան ու դժուարութեան մէջ ենք եւ Աստուծոյ կը դիմեն օգնութեան: Ահա ճիշդ այս իմաստով, Առաքեալը կու գայ վարահեցնելու, որ Աստուած անպայմանօրէն կը լսէ, մանաւանդ՝ երբ կը դիմենք, կ'աղօթենք Իր կամքին համաձայն, պայմանաւ որ մենք իմանանք, գիտնանք, գիտակցինք թէ ինչ է Աստուծոյ կամքը: Որովհետեւ յաճախ կը շփոթենք Աստուծոյ կամքը մեր կամքին հետ: Աստուածաշունչը այսպէս կը սորվեցնէ թէ ինչ է Աստուծոյ կամքը: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «**Աստուած կ'ուզէ որ բոլոր մարդիկ փրկուին եւ հասնին ճշմարտութեան ճանաչումին, թէ՛ մէկ Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ եւ մարդոց միջեւ միակ միջնորդ մը՝ Քրիստոս Յիսուս մարդը, որ ինքզինք իբրեւ փրկագին քրուաւ բոլոր մարդոց համար**» (Ա Տիմոթ 2:4-6): «**Աստուծոյ կամքն է՝ որ դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք պոռնկութենէ**» (Ա Թեաղ 4:3): Իսկ Յովհաննէս Առաքեալ իր Աւերարանին մէջ կը գրէ այսպէս. Յիսուս ըսաւ անոնց. «**Որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ոչ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը Անոր՝ որ զիս դրկեց: Զիս դրկող Հօրս կամքն է, որ չկորսնցնեն ոչ իսկ մէկը բոլոր անոնցմէ՝ որ ինձի քրուաւ, այլ յարուցանեմ զայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է. Ով որ քրեսնէ Որդին եւ հաւաքայ անոր՝ յաւիտենական կեանք պիտի ունենայ, եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը**» (Յովի 6:38-40): «**Եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի**»: Ուրեմն, ի՞նչ է Աստուծոյ կամքը: Մեր փրկութիւնը, յաւիտենական կեանքը ժառանգել: Եթէ այս է որ կը խնդրանք, Աստուած մեր խնդրանքը կը լսէ:

«**Եւ երբ գիտենք թէ մեր խնդրանքները կը լսէ, գիտենք նաեւ՝ թէ պիտի սքանանք ինչ որ կը խնդրանք իրմէ**» (15 հմբ): Յովհաննէս Առաքեալ կը վարահեցնէ, որ ոչ միայն Աստուած կը լսէ կամ պիտի լսէ մեր խնդրանքը, երբ Իր կամքին համաձայն է որ կը խնդրենք, այլ նաեւ պիտի քրայ մեր խնդրանքը, այսինքն՝ յաւիտենական կեանքը: Այս միտքը կը ներկայացնէ Յովհաննէս Առաքեալ ոչ միայն անձին համար, այլ նաեւ ի մտի ունենալով յաջորդող հաբուածը, որ կ'ըսէ. «**Երբ մէկը քրեսնէ, թէ իր հաւաքացեալ եղբայրներէն մէկը գործեց մեղք մը որ մահացու չէ, թող աղօթէ Աստուծոյ՝ որ կեանք քրայ անոր: Ասիկա կ'ըսեմ միայն անոնց համար՝ որոնց մեղքերը մահացու չեն, որովհետեւ մահացու մեղքեր ալ կան, որոնց համար չեմ ըսեր որ աղօթէ**» (16 հմբ):

Այսպէղ Յովհաննէս Առաքեալ ցոյց կու փայ, թէ կարելի է եկեղեցոյ մէջ, հաւաքացեալներ մեղք գործեն, որոնց համար ալ աղօթք բարձրացնենք առ Աստուած, որպէսզի կեանք փայ: Մեղք, որ մահացու չէ: Իսկ թէ ի՞նչ է մահացու մեղքը, որուն համար Առաքեալը կ'ըսէ. «**որոնց համար չեմ ըսեր որ աղօթէ**»: Քրիստոս Աւերարանին մէջ պիտի ըսէ. «**Ամէն մեղք պիտի ներուի, բացի Սուրբ Հոգիին դէմ եղած հայհոյութենէն, պիտի չներուի**» (Մարթ 12, Մրկ 3): Որ կը նշանակէ, մերժել այն ճշմարտութիւնը, որ Աստուած յայտնեց Յիսուս Քրիստոսով: Այսինքն՝ այն ներումը, մաքրութիւնը, մեղքերու թողութիւնը, որ կը կարարուի միայն ու միայն Յիսուս Քրիստոսով: Երբ այս ճշմարտութիւնը կը մերժուի, յամարօրէն եւ խստաւարտութեամբ, ահա այս է որ անձը կ'երթայ մինչեւ մահացու մեղքի: Այլ խօսքով՝ մերժել Աստուծոյ ողորմութիւնը, Անոր պարտասած փրկութիւնը որ կարարուեցաւ Յիսուս Քրիստոսով: Ահա Եկեղեցոյ կոչումը, աղօթելու բոլոր անոնց համար, որոնք այս կամ այն պատճառով մեղքի փակ են ինկած, որպէսզի Աստուած եր կեանքի կոչէ:

Յովհաննէս Առաքեալ նաեւ կը յստակեցնէ, որ «**Ամէն անիրաւութիւն մեղք է ,բայց ամէն մեղք մահացու չէ**» (17 հմբ):

### **ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ (5:18-21)**

Աւարտելով նամակը, Յովհաննէս Առաքեալ անգամ մը եւս կու գայ վստահեցնելու, եւ այդ վստահութիւնը, երբ այս փոքրիկ հարուածին մէջ, Առաքեալը երեք անգամ կը գործածէ «գիտենք» բառը: «**Գիտենք, թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի մեղանչեր, այլ Քրիստոս, որ Աստուծոյ ծնունդն է, կը պահպանէ զայն եւ Չարը չի մօտենար անոր**» (18 հմբ): Քրիստոնէայ հաւաքացեալը ի վիճակի չէ յաղթելու, բայց որովհետեւ Աստուծմէ ծնած ենք, եւ Յիսուս Քրիստոս Ինք մեզ կը պահպանէ: Ինք աւելի զօրաւոր է քան մեր թշնամին: Վրանգը սա է երբ կը խօսինք Չարի մասին: Կամ այն է որ ընդհանրապէս չենք հաւաքար անոր գոյութեան, եւ կամ ան շար զօրաւոր է որ անկարելի է յաղթել անոր: Ահա հոս է որ մենք վստահութիւնը պէտք է ունենանք, որ Աստուած ամենագօրեղն է:

Տակաւին, «**Ձեպէր ամբողջ աշխարհը Չարին ենթակայ ըլլայ, մենք գիտենք թէ Աստուծմէ ենք**» (19 հմբ): Այսինքն՝ Աստուծոյ կը պարկանինք:

Ահա ճիշդ անոր համար ալ, «**Գիտենք, թէ Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէսզի ճանչնանք ճշմարիտ Աստուածը: Մենք միացած ենք ճշմարիտ Աստուծոյ եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի: Ան է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը**» (20 հմբ):

Անոր համար ալ վերջին խօսքն է Յովհաննէս Առաքեալին. «**Որդեակներ, դուք ձեզ կուտքերէ հեռու պահեցէք**» (21 հմբ): Կարծէք այնպէս կը թուի, որ անկապ արտայայտութիւն մըն է այս վերջին նախադասութիւնը, սակայն խորքին մէջ, ոչ: Ընդհակառակը, կուտքը ուրիշ բան չէ եթէ ոչ փոխարինողը Աստուծոյ, եթէ երբէք մենք կը հաւաքանք ճշմարիտ Աստուծոյ եւ Ինքն է յաւիտենական կեանքը, ապա այլեւս կուտքի կարիքը չունինք: